

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 ֆր.
սարկիսի	6
վեցամսեայ	6
Արեսասինականի	
համար սարկիսի	15
վեցամսեայ	8
Ամերիկայի համար	
սարկիսի	3 ֆր.
վեցամսեայ	1 50

Եսանուցման տողը առաջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սակրիսի է. երկուսն աւելի սակրիսիներու համար 20 0/0 զեղչ կրուցայ:

Վառնայի համար ձեռք 10 սակրիսի

ՇԱՐՇՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՐԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

Նախկին և նոր հրատարակչական հասարակութեան հասցիք

Редакция на вѣстникѣ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoun“ (Bulgarie) Yarna

Պուշկարիոյ համար ձեռք 15 ՍԱՆԻՍ

Արեսասինականի համար ձեռք 20 ՍԱՆԻՍ

Գրութիւնք և ստորագրութիւնք

«ՇԱՐՇՈՒՄ» Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆՈՐԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՆՈՒԿ ՎՃԱՐԷ

ԳՐՈՇԱԿՈՒՅ

—)o(—

«Հայ Յեզ. Իսախանյան»-ի 15 րորդ տարեգրքին է:

Տասնուհինգ տարի է անցել այն օրից, երբ թիւրքահայոց ազատութեան դատը հրացանների ուրուսներին մէջ իր առաջին քայլերն էր առնում. Որքան տարբեր էին նրանք ներկայ օրերից... Ինչ անխուղ լաւատեսութիւն էր տիրում հայկական շրջաններում. յոյսերը վարդապոյն, սրտերը զարթոյն, յաղթանակը մօտ... Թուրքները, թէ ահա մի քանի կը բռնեն, մի քանի շառաչալի նահատակութիւններ տեղի կունենան, և շարատանջ խնդրու կը լուծուի...

Իսկ, ցաւագին հիասթափութիւններ ունեցել են բոլոր ազգերը իրենց ազատագրական ճիգերէ մէջ, — մենք բացառութիւն չը կազմեցինք օրէնքից: Մեր հիասթափութիւնը աւելի խոր եղաւ, աւելի յարատեւ. մեր թըշնամին աւելի վայրագ, մեր մարտիրոսութիւնը՝ աւելի ցնցող. Ոչ անբաւ արիւնք, որով ներկեցին Հայաստանի լեռներն ու ձորերը. ոչ հերոս նահատակների փառահեղ բոլորն ու կռիւների անվերջանալի շարքը՝ չը հասցրին մեզ բաղձալի վախճանին, — և տաննուհինգ տարւայ անդու, փոթորկոտ գործունէութիւնից յետոյ, այսօր մենք տեսնում ենք, որ դեռ պէտք է քայլել, թերեւս շատ քայլել...

Նախորդ տարւայ փորձութիւնները մի անգամ եւս չի շտեղծին մեր առջեւ այդ անոգոք անհրաժեշտութիւնը: Յնդափոխական սեպակէտից մի եզակի թւական էր այն՝ լի յոյզերով ու յոյսերով երբէք հայի ազգական կորովը անքան մեծ չափերով չէր արտայայտուել իր խորութեամբ թէ տարածութեամբ: Երբէք Մեծ Հայքը — դարերով արորած մի ստորակ ու զապիր գոյութեան ծոցում — վկայ չէր եղել այնքան ուժգին ըմբոստացումների, այնքան

քան յանդուգն, — դիւանագէտի լեզուով իսկ հռչակած — ճակատամարտերի: Իսախանյանի լեռնաօրինակ ճիգեր թափեց՝ կուռ ժողովրդին զէնքով զարմ հայ թայթելու համար: Նա իր ուժերի մեծ մասը տեց թէ՛ երկրի մէջ, թէ՛ արտասահմանում, եւրոպական դիպլոմատիայի առաջ, — և այս անգամ եւս նրա յոյսերը չարքարացան... Նրա դիմաց, ըստ առաջնոյն, ցցեցին ապուռածի պէս հայ քաղաքական կեանքի երկու անոգոք գործունէները — թիւրք կստավարութիւնը իր սովորական ճնշումներով, և դիւանագիտութիւնը, մանաւանդ ռուսականը, իր ցինիկ անտարբերութեամբ...

Սոսկալի իրականութիւն, անտարակոյս:

Եւ այդ ցաւոտ իրականութեանը ամենից շատ դիտակից են նրանք, որոնք ամէն օր ու ամէն վայրկեան ապրում են ժողովրդի հետ, բաժանում են նրա վշտերը: Մի կազմակերպութիւն, որ ձգտումն ունի ժողովրդական դատը վարելու՝ ինքն իր մահաւն դատավճիւր կ'արձակէր, եթէ առաջ տարէր լոկ յեղափոխական յափշտակութեամբ, առանց գիտակցելու գրութեան պահանջները, առանց յարմարելու այդ պահանջներին:

«Կռիւր Տաճկահայաստանում կարող է փոփոխել իր ձեւերի մէջ, բայց երբէք ընդհատուել չի կրնար: Եւրոպան իսպառ անընդունակ է յայտնուում «ապահովելու հայազգաբնակութիւնը քրքերից ու չէրքէզներից», — ապա հայ յեղափոխականների վրայ է ընկնում այդ գոշարին, բայց և սրբազան պարտականութիւնը: Կործող մարմինը կը շարունակէ արծարծել ամէնուրեք թիւրքահայերի դատը, կոչ անել ամբողջ հայութեան, անցնել իր նիւթական ու բարոյական ուժերը, հաւաքել իր գրօշի տակ բոլոր զգալուն, ըմբոստ տարրերը և

ուզել նրանց դէպի թիւրքահայ ժողովրդի ինքնապաշտպանութեան ու ազատութեան գործ:

Մեծ հաճոյքով արտատպում ենք վերջին «Իրօջակ» նախալոգոսածի այն մասերը, որոնցով Հայ Յեզ. Իսախանյան պաշտօնական օրգանը պաշտօնապէս մեր ազատագրութեան գործի իրական կացութիւնը ներկայացնում է այնպէս, ինչպէս մենք էինք ներկայացրել և անգիտակից ու մտավախ դաշնակցական կոչւածներին մեզ դէմ դրողները:

Մեզ դէմ բողբոջված և զըրգըրված պարոններին խորհուրդ ենք տալիս ուշի ուշով կարգալ «Իրօջակ»-ի այս նախալոգոսածը եւ ըմբռնել թէ՛ դառն ճշմարտութիւնը խոստովանելու պահանջներին յարմարվելու ձեւեր որոնելը ոչ թէ ցնդածութեան նշան է, այլ ժամանակի ոգին հասկանալու և քաղաքական հասարակական գործիչի պարտականութիւնը գիտակցելու:

ՀՈՍ ՀՈՆ ԱՍԵՆ ՏԵՂ Ս. ԲԵԹԵՐՍՊՈՒՐԿԻ ԴԵՊՔԵՐԸ

Յունվարի 21—22ը (ն.Տ.) մասնաւորապէս, ըլլալով միազամայն անմոռանալի օր մը Ռուսաստանի ժողովրդի պատմութեան համար, աւելցուց արիւնոտ ու ամօթալի էջ մը ցարթգրի անպէտ ու մահափիւռ գոյութեան ոճիրներով հալածանքներով գեղակերտուած հսկայ հատորին:

Մեր ընթերցողները արդէն մինչեւ այսօր ծանօթացած ըլլալու են այդ ու ատոր յաղորդող քանի մը օրերու դժբաղդ դէպքերուն, որուն հետեւանքը եզան հազարաւոր զոհեր — այր կին, երեխայ, — ամէն սեռէ ու ամեն հասակէ անխոր: Ռուսական հրամանատարները, ի շնորհիւ իշտ հոս ալ ցոյց տան իրենց մտազորութիւնները ու քաղաքիւրծութիւնները... անգէն ու անպաշտպան ժողովուրդը կոտորելու, այն՝ նոյն իսկ անոյժ ու անմեղ պատանիներ ու մա-

նուկներուն խղիւղելու համար... ձերմակ ծարր որ մինչեւ այսօր միամիտ հասարակութեան թուրքեանազները շոյելով յաջողած էր իր «պարթիկ հօր» արտոք պահել, կառուելով ծարրօյէ Սէլոյի ապարանքին մէջ, փոխանակ իր «աւելցնելուն» հեզ ու խոնարհամատոյց աղբան ու խնդիրքը լսելու, փոխանակ առաջ նետուելու ու անոնց անտանելի կացութեան բարերար նեցուկ մը հանդիսանալու, մինչեւ իր ոտքը խաչերով, աւետարաններով ու իջնեներով ծնկաչոք աղբարկուներուն վերայ թափեց իր նախապատմական դարերէ մնացած վայրագ կողաքներու խուժանը. իր զինուորական զինուած գունդերը, որպէս թէ թշնամի բռնակ մը պիտի դիմագրաւէր:

Ու արիւնք հոսեց... ձերմակազարդ մետրոպոլ կարմրեցաւ հայրենիքի հարազատ վաւակներու արիւնքով, նեվայի ստուցապատ ափերը ներկուեցան արիւնով ու ծարր մնաց անդրդուելի, անզգայ ու անտարբեր Ս. Մ. բաւական չէր. բաւական չէր նաեւ հրացաններով զինուած զօրքեր ու կողաքներ ժողովրդին վրայ թափելը. ան Բեթերսպուրկի կառավարիչ կարգեց անմիջական կերպով իր հրէշաւոր ու գազանային անցեալով հանրածանօթ Դրէքովը, նախկին ոստիկանապետ Մօսկովայի, տալով անոր լիազօրութիւն ամեն միջոցներ ձեռք առնելու համար, յօգուտ ժողովրդի հանդարտութեան և խաղաղութեան (° ° °) Անոր տրամադրութեան տակ դրուեցան, բացի ոստիկանութեան վոհմակէն, զինուած զուեւեր, հակառակ պարագային Բեթերսպուրկը իր ապաշարուած վիճակէն ազատելու համար: Անոր քմահաճոյքին յանձնուեցան նաեւ բոլոր հասարակական հիմնարկութիւնները, մէկին կամ միւսին հետացնելը, օրէնքներ հաստատել ու պատգամներ տալը եւ այն, այնպիսի կէտեր որ քաղաքակիրթ մամուլը շուարած կը թողուն...

Ի՞նչ էր ժողովրդին կամ աւելի, այն բանւորներուն առաջարկն ու խնդիրքը, որ մէջ սեղ դրին: Շատ պարզ ու բնական կէտեր, որոնք այսօր Եւրոպայի էն փոքրիկ ազգութիւններուն մէջ ալ ընդունուած են ու կը յարգուին: — Երաշխաւորութիւն սեփական ապահովութեան, ազատութիւն խօսքի ու գումարուսներու, խղճի ազատութեան իրաւունք, ստիպողական յանձնարում վարժարաններու՝ ի հաշիւ տէրութեան, օրէնսդրութեան մասնակցում ժողովրդի ներկայացուցիչներուն կողմէ, համար

ՊԱՏՆԵՐԱԶՄԻՆ ՇՈՒՐՈՂ

Վերջին մէկ քանի՛ շաբթուան զէպ քերը զրեթէ մոռցնել ատին Բորգ Արթուրի անկումէն մացած ոգի որով ինքը :

Այդ բաղձալի պատահարին յաջորդեց Ձէմատօններու իրարանցումն ու բնութաբանութիւնը, որով բաւական աստիճանով զգալիցաւ օրուան մասուլը : Ասոնց փորձարհնեց բանւորական գործադրութիւնը սկզբնական թելը այլ և այլ քաղաքներ, մինչև օր եկաւ յունկ : 22րդ արիւնալի կիրակին, որ վերջացաւ — գէթ աւերեւոյթս — Բեթերպուրկի հասարակութեան համար շատ ողբալի ու զայրացողիչ եղբերգութիւնով մը :

Կրեթէ մոռցուած համարուեցաւ Հեռուար Արեւելքը, եւ նոյն իսկ նախաձեռնութեամբ անգլիական օրաթերթերը կարծես չը կրցան սրելնաներ բաւականացնել ժամ առ ժամ Բեթերպուրկի հանցանոց հեռագիրներուն ու մէկ կողմ թողուցանի : արեւելքի նոսա գիրքներու ստուար մասը :

Սակայն, հոն ալ նորութիւններ պակաս չեն անշուշտ : երկու կողմն ալ արթուն են նախապարտատեթեան մէջ է մտաւոր հակոյ ու վճռական ճակատամարտի մը համար :

Բեթելի գործակալութեան հազոր գած լուրը կը հաստատէ նաեւ Քերանսական թղթակից մըն : ալ թէ փերթթերթի կին այժմ իր ձեռքին տակ ունի կուսակց շրջա բաժանում, ընդհանուր գումարը հասնելով մոտաւորապէս 300,000 մարտիկներու թէ, շուտով գործիք մէկ հակառակի յարձակումին նախօրեակին մէջ կը բռնուի : Ասիկա ուսուսական ցամաքային ուժն է : Իսկ նուազինը — Բեթելինք մեզանչիւր այսուհետեւ ասանկ անուն մը ապով — շատ անորոշ ու անվճռական կացութեան մը մէջ կը գտնուի :

Հիւսիսային ծովու քաղաքամբու կերտը, որուն կատարած սխրագործութեան արդիւնքը կը քննուի մինչև այսօր Բարիզի միջազգային քըն-

նիչներու առջև, որչափ որ կը լըսենք, որոշած է առ այժմ հեռուոր արեւելք շուղեւորուիլ ու մասդիր է անուագն երեք ամսոյ չափ եւս ըսպասել հնդկական ուղիների ջուրերուն մէջ, հնդկական արշապիղազոսներուն հոտենալու : որպէսզի շրջալ թէ ճարտնական նաեւրու հանդիպի :

Մեծագետ գովելի է Բոստօնի քաղաքին այս խնդրի ընթացքը : Երանի թէ որչէր վեց ամիս սպասել, որպէս զի, թերեւս այդքան ժամանակամիջոցին պատերազմն ալ վերջ մը գտնելով առանց սխուր արկածներու հանդիպելու զժբախտութեանը, բարով-խնորով վերադառնար եկած անը :

Ուրիշ շատ հիասթափեցուցիչ տեղեկագիր մը կը զրկէ «Թայմզ» թէ քիմի թղթակիցը, որուն առջև քըրեթէ շուարած կը մնայ նոյն ինքը խմբագրութիւնը :

Թղթակիցը, հեռ. արեւելքի մէջ գտնուող «Թայմզ» թղթակիցներուն էն հաւաստիս է, ուստի գծուար է կասկածիլ իր հազորած տեղեկութիւններուն :

Վերջին պահուն, այսելելով Բորթ Արթուրը ներսէն, ու քննելով պայն շատ խորազննի կերպով, յանձնուած կը յայտարարէ «անպատուարեւ անձնատուութիւն» մը, հիմնուելով զանազան փաստերու վրայ, որուն ճիշդ հակառակը կը պնդէին նայն իսկ ճարտնական պաշտօնական յայտարարութիւնները զեռ Բորթ Արթուրի զբրաւան պահուն :

Ան է օտար պաշտօնեայ անկարող է անձնատուութեան պատճառները քայտարել : Մարդու պակասութեան քայտարութիւնը անդին է : Վերաբոյժ-ժէնեբայ Պալաչէվը, յանձնումի պայմանները վրձած պահուն, հաստատեց թէ 20,000 և 5000 հոգի հոգի միայն պիտանի էին, մնացեալ 20,000 հրեանդանոցին մէջ հրեանդ ու վերաուր ըլլալով, ժենեբայ Եթօ. սէլ այդ թիւը ինքեցոց 4000 է... Մինչդեռ այսօր ճարտնացիք գտած են որ 25000 կարող անվնաս զինուորներ

կային, որոնք կրնային սարթի մը ընել... Այնպէս կը կարծուի թէ միայն 200 օֆիսերներ մեռած կամ վիրաւորուած են պաշարուի միջոցին...

Այլ ալ յանձնուելու պատճառը պաշարի պակասութիւնն էր, որուն ասպին անպայցք ան է՝ որ երկու օր շարունակ պաշարուողները անպատակ կերպով բերդին աննշատակ կողմերին պարպեցին հրոցաններ, թայց հակառակ ստոր և հակառակ նաւանգութիւն մէջ թափուածին, մեծ քանակութեամբ մնացած էր, երեք մակազին պայթեցուցած էին, բայց էն մեծագոյնին մօտեցուած չէ և ամբողջ լիւթ-լեցուն է :

Թղթակիցը ցոյց կուտայ նոյնպէս երկարութիւն թէ ուսուցիչի նուագութիւնն ալ պատճառ մը չէր յանձնուելու : քանի որ տակաին երեք ամսուան առաջ ուսուցիչն զտու. ունին եղեր նաեւ ազատ շտաբանիս, վտարու են, մոտ 6000 թօս չը ձեռնուած ալլար, 20 Օր չափ ձի և անգին քանակութեամբ ամուս :

Ցոյց կուտայ թէ ինչպէս ուսուցիչը կը գտնուէին անհաւատարմութեն նըպաստար պայմաններու մէջ, դիմագրաւելու համար, մինչ ճարտնագրաց համար ճակատագրական ու անուրի էր յարձակումը ու կը վերջացնէ նետեակ տողներով :

Ամեն մանրամասնութիւններ կը համակերպին զօրավար Եթօսլը զատապարտելու մէջ, որը եթէ արգիլուած չըլլար զօրավար Բոսարթի թայր որոշումէն շարթներ առաջ անձնատուր եղած էր, Ամեն մանրամասնութիւններ կը համակերպին զատապարտելու ոտս օֆիսերներու մեծամասնութիւնը որոնք աւելի ուրիշ պէտքերու նուագութեան վախ կըրնային ունենալ քան պաշարի : Ամեն մանրամասնութիւններ կը գովարանեն ուսուցիչներուն կոտոր զօրքերուն կորովը, որոնք շատ անգամներ ամօթաբար կը հրամայուէին իրենց օֆիսերներէն : Ամեն մանրամասնութիւններ կը համաձայնին, որ տակաին չէ եղած մէկը, որ ունենա-

լով իր վրայ պատասխանատու հրամանատարութիւն մը, այնքան նուագարժանի ըլլայ հերոս տիտղոսին որքան զօրավար Եթօսլը :

Անոնք, որոնք ականատես եղան բերդին գրութեան, հակառակ իրենց աչքերուն վկայութիւնը Եթօսլի ապեցուցիչ խնդրութիւնուած յուրերուն հետ, իրենց համակրանքը հեղեղութեան փոխուեցաւ, վստահ ըլլալով որ պատմութեան մէջ նման անվարի անձնատուութիւն մը չէ արձանագրուած գեո :

Եթէ Գայգերը սպասէր մինչև Գերմանական և այլ զինուորական արաշխներուն սեղեկագրութեանց, երբէք չէր կրնար Պատուոյ Աստիճան շընորհել զօրավար Եթօսլը :

Լուրը անշուշտ ստորինակ է, բայց անհաւատալի չէ :

ԱՆԳԼԻՅՅԻ ՄԸ ԿԱՍԻՒՒՒՐԸ

Տուվր քաղաքի քաղաքապետը Ուելսամփրիւնը անցեալ օրեր հրապարակագրի մը, որ գացած էր անոր կարծիքը հասկնալու ուսուսական խառնուրթիւններու մասին, հետեւեալը ըսած է. —

«Եթէ ես Ռուսիոյ Սարր ըլլայի պարզապէս այսպէս կընէի — ընթերթի կը հրաւրէի բոլոր մեծ իշխանները, Ա. Սիւնգի բրօքուրօրը և Ռուս պաշտօնեութեան շատ մը անպսմները ու անոնց կենացը խմելէն վերջը կըսէի անոնց. —

«Պարոններ, ճանաչուր թուէն մը զձեզ կը սպասէ. զձեզ Սիւնգի բրապիտի տանի, լու հակուրթեամբ, որպէս զի ձեզի հետ գէշ բոյ մը չպատահի Ողջ ըլլաք, ուրանք բարի ճանապարհ :

Այնուհետեւ ժողովրդին գործերու մասին, ես համաձայնու-

ցաւու ու առասպելական պատմութիւններ վերագրել ամէն մէկին, գով շարժող ու քակ բացող լալ կան շեշտերով համեմուած, որոնք ակնկալուած յաջող արդիւնքը կուսնան : Ժամանակը բաւական անցնելու վրայ է, ուստի, ժամացոյցը նախելով :

Արիւնք բարեկամներ, կըսէ, կը յուսամ թէ ներողութիւն պիտի գտնուիք հարկ եղած ժամանակէն քիչ մը երկար խօսելուս : Ուրեմն, վերջացնելով լալիքներս, պիտի առաջարկեմ տղոցմէ մէկուն մեզ երգ մը երգիլ, մինչ միւս երկուքը, բարեկամ մը ընկերակցութեամբ գանձանակ պիտի պատցնեն, որը կը յուսանք թէ թեթեւ չը պիտի վերադարձնէք : Այդ դուամար պիտի յատկացուի նըկարագրած զէպերուս ստիւս ստեղծուած շատ մը որբերուս, որոնք իրենց աչքն ու աղօթքը ձեզի են ուղղած... Այնուհետեւ կը յուսամ, քանի մը խօսք պիտի ընէ տիկինս...»

Մինչ աղոց երկուքը, արեւելեան կապոյտ շալվարով, ֆէտով և պաշտով ամօթով կրակ դարձած կը մտնեն բազմութեան մէջ հանգանակութեան համար, երրորդը սկսած է երգ մը «Թէ իմ ալեւորսի եղանակով Ողջ որ կը յուսայ բարձրեալն տէր

փրկչին, եւ զայն ապաւէն կընէ իր անձին. Բարձրեալն անվտանգ, զայն իր շուքին տակ :

Սաղաղ կը պահէ ամէն ժամանակ : Երգին քանի՛ մը լղրճուկ համարներ կը շարունակուին իրարու ետեւէ, եւ մինչ պատանին կը պատարտուի տեղը երթալ, պատուելին, ի կատարով որ հանգանակութիւնը տակաին չէ աւարտած, կը հրամայէ ուրիշ մը սկսիլ — Ողջ սուրբ հայրը, յՄեր հայրենիքը՝ եղանակով :

«Ողջ սուրբ հայր ինձ ցուցուցեր ես, Յոյս է միայն քեզմէ : Օրէ օր զէս անցուցեր ես Բազմութիւ վասնդներէ :

Վերջապէս առաջին մասը կաւորուի ու նախադար կը հրաւրէ տիկինը : Պատուելին տիկնոջ ջերմանգութիւնը անքաւ է — կը փակէ աչքերը և կառաջարկէ միւսներուն եւս միեւնոյնը ընել, աղօթելու համար... :

«Ողջ տէր շնորհակալ ենք քու բարիքներուդ համար, շնորհակալ ենք որ մեզ այսպէս իրարու մօտ բերիք այս երեկոյ՝ քու հրաշագործ արարքներդ յսելու համար, շնորհակալ ենք որ մեզ մինչև այս բոպէս ողջ եւ առողջ պահեցիր : շնորհակալ ենք, որ

մեզ փրկիչ մը ծնար, որ ամենուս միտիմարչին է : Այս ամէնը իր անուսով կը խնդրենք. ամէն :»

Վերջացնելով աղօթքը՝ կըսկսի խօսելու : բայց, խօսակցութիւնը շատ կարճ էր եւ նիւթականի շուրջը կը դառնար : Այդ ու կին իրարու ամբողջացուցիչ մասերը կը կազմեն :

«Սիրելի բարեկամներ, գիտէք թէ ձեզմէ ոչ շատ հեռու որբանոց մը ունինք : ուր կը պահենք որբեր եւ գիտէք նոյնպէս թէ տղայ ըսուածը միշտ պատուող, վատնող ու սպառող է... հակառակ մեր չափազանց խնայողութեան, կրկին հարիւրաւոր ոսկիներու կը կարծուիք որբանոցը կանգուն պահելու համար, որ նախախնամական կոչում մը սեպած ենք մեզ համար : Հագուստ, չապիկ, գոլիւպայ, կօշիկ եւն. շատ կարեւոր բաներ են եւ անոնք, որ գաւկի տէր են, կըր նան հասկնալ բոլորը... Բոլորովին նոր բաներ չենք խնդրեր ձեզմէ : այն պիտի հագուստներ, որոնք չէք կրնար հագնել, փոխանակ նետելու, մեզի ղրկեցէք. մեր տղաքները միշտ շընորհակալութեամբ կընդունին եւ ձեզ համար կաղօթեն : Գիտէք թէ մօտերս Մուսնոյ է. երբ ձեր տղոց համար գընուաներ կընէք, մի՛ մոռնաք եւ մեր տղաքները, որոնք մէկը չունին : Պը-

տուղ, խաղալիք զանազան ուտելիքներ միշտ տղոց սիրելի բաներ են... կը յուսամ թէ չը պիտի մոռնաք այս քանի մը համառօտ խօսքերս : Աստուած ձեզ ալ սասնապատիկը շնորհէ :»

Ասոր կը յաջորդէ նոր երգ մը եւս, «Հիմի՛ էլ լուենքի եղանակով :


«Աստուած՝ ողորմած, ինձի ողորմէ, Անհուն գթութեամբ իմ մեղքս քաւէ' :

Այն յանցանքէս լուս՝ զիս մաքրէ, իմին մեղքերէս, ո՛վ տէր, զիս սրբէ' :

Եւ ողորմած հէք արարածիս, Տէ՛ր ողորմա՛ւ :»

Երկու համարով այս խայտառակութիւնն եւս կը վերջանայ, ու նախադական շորս բառ աղօթքէն վերջ միտինգը վերջացած կը համարուի :

(Շարունակելի)



Թիւն մը կը կայացնէի ժողովրդին ներկայացուցիչներուն հետ... Անգլիացի քաղաքացիները շատ պարզ միտք մը յայտնած է...

ՌՈՒՍՃՈՒԲԷՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Պարտութեան քանի մը օրուան հանգիստը թող չտուաւ մեզ որ ժամանակին այս էջերուն մէջ ներկայացուցինք այն սիրուն գրական-երաժշտական հանգէտը որ տեղի ունեցաւ յունիստ Թիւն քաղաքիս ազգային տրական վարժարանին մէջ:

Ռուսները Գաղտնիքի ընկերներն էին որ իրենց հիւր ընկերներուն ներկայութենէն օգտուելով օարքած էին սոյն գրական-երաժշտական հանգէտը որուն սիրայովար մասնակցեցաւ Պարաքս նուագախումբն ալ:

Երգերու սիրուն փունջէ մը ետքը, զոր Պարաքս ընծայեց հանգիստականներուն՝ բնմ բարձրացաւ ընկեր Գ. Ա. որ երկու ժամ անընդհատ խօսեցաւ Հայոց ստրկութեան շրջանին վրայ: Ընդարձակօ, էն պարզեց թէ ինչպէս մէկէ աւելի կէտերու մէջ մը շտ անշէջ մնացած է անկախութեան նուիրական հուրը, թէ ինչպէս Ղարաբաղ, Սասուն, Ձէյթուն, Տէրսիմ և այլ կեդրոններ ցեղին ազնիւ ու արու յաակութիւնները անազարտ պահած են: Ի վեր հանեց Խարայէլ Օրբի եւ իր նմաններուն արժանիքը, մատնացոյց ըրաւ թրքահայ եւ ռուսահայ գործիչներուն դերը՝ մասնաւորապէս ծանրանտրով Պէշիկիճաշիանի, Սոկոնի, Ռուսիանի, Օտտանի, Խրիմեանի, Վարժապետեանի վրայ, ինչպէս նաեւ անոնց զուգընթաց Ռոզմետեանի, Կարապետեանի, Բաթիպարի, Արժրուսի եւ Բաթիպարի ժխտելի գործունէութիւնը պանծացուց: Անոնք գրչով յեղափոխականներ էին, մարքերը մշակեցին ու պատրաստեցին: Եկաւ Փորթուգալիան և ժողովրդին ստրկացուց զէնք բարձրացնել շէրքէզներուն և սպաննողներուն զէմ: Հեազնեակ կազմուեցան Արմէնական, Հնչակեան և Գաղտնիական կուսակցութիւնները՝ որոնք իրենց որոշ ուղղութեամբ գործեցին և վանի մէջ ձեռք ձեռքի կուսեցան թշնամոյն զէմ: Բանախօս ընկերը ներկային գաղտնի անխօս գտուէին Հնչակ-

եաններուն նոր ուղղութիւնը՝ Ոսկիալիզմը, գաղտնի հաշմանքը որ հայու կեանքին ճշմարիտ յայտարարն է և անսայթաք կերթայ յեղափոխական փշոտ ապարէզին մէջ, պատարակեց վերակազմեալներուն թզթէ յեղափոխութիւնը և Միութիւններուն արդահատելութիւնը: Թուր հանպիսականները որոտընդոտ ծափերով ուղչունցին ընկեր Գ. Ա. ի մաստաւրց խօսքերը: սակայն գտնուեցան մէկ քանի Միութիւններ որոնք փորձեցին բարբաջել:...

Գործակալն պատանի մը, Մ. Մալախեան, խորտա շեշտերով արտասանեց Սերբի նուիրուած քերթուած մը:

Ապա խօսեցաւ ընկեր Մարգարեանի:

Համի քաղաքացիներուն համար հայրենասիրութիւնը պանծալի առաքինութիւն մըն էր: հիմա, երկու հազար տարի ետքն ալ, Հայերու համար նոյնքան նուիրական է հայսեանասիրութիւնը: սակայն դրական գործով ու զոհարարութեամբ պէտք արտայայտուի անիկա: Հայրը որ հասկըցած է հիմա հարեանասիրական պարտականութիւնները՝ արժանի է պարելու:

Օրիորդ Չ. Պալճեան՝ թրթռուն ձայնով և յստակ առողանութեամբ՝ Ղարապէս կարգաց լուզիչ հատուած մը որ խորունկ աբպատրութիւն թողուց հանգիստականներուն վրայ:

Պ. Վ. Շալճեան, զիւ ձայնով, երգեց Չօպանեանի Օրորը և ծափեր խից:

Վերջին խօսողը եղաւ ընկեր Պրօնեան: Իրեն յատուկ անտեթեանով ձեռնարկ կը արեւ շինիլ ստեղծարանութիւն մը ընել: Երկար ծանրացաւ մայր երկրի ահաւելի կացութեան վրայ, փառաւորեց արեւ կեանքերը որ զոհուեցան անոր սիրոյն և մազթեց որ անոնց հետեւողները շատնան Պէշիկի թանկ առջը՝ ըսաւ՝ Հայր պէտք ունի հայրենիքի մը ուր կարենայ մարդավարի կեանք մը ապրել: (Բունըն ծափեր)

Երաքս նուագախումբը՝ սիրուն հատուածներ նուագեց, և հանգիստականները անուշ ապաւորութեան տակ՝ մեկնեցան հանգէտէն:

Ռուսներէն պարչելի բզէզ մը՝ Չիւնուր կեղծանունին տակ պահարտած ճորտարուրեր էր «Իրաւունք» մէջ խեղաթիւրել իրողութիւնները: Ըստ այդ պան գոչ արարածին՝ հանգիստականները սուրբ են եղեր, «փարսա» է պարտեր, հանգիստականները ձանձրացր են, եւն, եւն: Ոտոնք պարզապէս լրբկութիւններ են, արդիւնք՝ լծացած խաղաղապարի մը:

Այդ խիչըր ելեր է չը հաւելի նաեւ ընկեր Վարդօր քիթին ու բերին: Չարմանալի բան, արդեօք բնու հայելին մէջ չի նայ յեր այդ շորքթաթ արարածը որ համուրի թէ ինք իր այլանդակ ճակտով, ցցուած ակունքով, հաստ ու արտակարկառ շրթներով պարզապէս «կոսիլ» մըն է: Եւ լաւ կը լայ որ այդ կապիկ «Չիւնուր» երթայ խաւարակուս Ափրիկէ միութիւն քարոզել իր հարազատ ազարիկներուն և իր չը լայիք սրամտութեանց անըման տափակութիւնը հրամայել անոնց: Չէ՞ մի որ այդ «իտիօն» ամէն իր զէմ՝ ելողին կրտէ թէ ինք «կարապետ» մըն է Միութիւններուն շոկատին մէջ... Օ՛հ, յառաջ... ԿՈՒՌՓ

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՄՈՒՇ ԵՒ ՍԱՍՈՒՆԻ ՄԵՔ

(- 0 -)

13 տեղեկագրեր
Կացութիւնը հեազնեակ աւելի ողբերգական կը դառնայ: Անգլիական հիւպատոսը կրկին վան վերադարձաւ իր տրամադրութեան տակ գտնուած փոքրիկ զուժարը բաժնելէ յետոյ:

Սասունցիներու գաղթումը կը շարունակուի: Մինչեւ թուականս Մշոյ գաշտը հաստատուելու եկած են Սեմալի ամբողջ բնակիչները: Շէնիկէն տասն ընտանիք, Ալքիի բնակչութեան կէսը և մաս մըն ալ հէլիէ կիւզանէն:

Իջնողներուն մեծամասնութիւնը պարտաւորեալ է մուրացկանութեան դիմել և շափաղանց կը տառապի ձմրան սաստկութենէն: Սասունցիներուն իրենց օճախները պատահական վերադարձը արգիլելու համար, եթէ պայմանները աւելի անյաշոյ ըլլան, կառավարութիւնը ստորագրութիւն կը պահանջէ որ վերջնապէս հաստատուին դաշտին մէջ: Ստորագրելու մերժման պարագային պարտաւոր են իրենց լեռները վերադառնալ, այսինքն ցուրտի և սովի մահին եմթարկուել:

Հարկերու հաւաքումը օրէ օր աւելի խիստ կերպարանք կառնու: Գոմերի մէջ 400 կարօտեալներ օգնութիւն ստացած էին: Անմիջապէս հարկահաւաքները կուզան և գիւղերէն կը պահանջեն 1000 զուրուշ տուրքը ստացուած օգնութենէն:

Բո Սուրեհիա

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՌՈՒՍԻԱ

Ամսոյ 24ին Հէլսինկիօրսի մէջ Թիւրանական ձերակոյտի շինութեան առջեւ ատրճանակի հար-

ուածով մը սպաննուած է ռուս կայսերական զօմխարը:

— Բեթերսպուրկէն Եւրոպական թերթի մը թղթակիցը կը հայտարարէ որ պետական խորհրդի վերջին նիստին մէջ, որ եղած է Յարին նախագահութեամբ որոշուեր է ժողովի հրաւիրել Չեմստիօններուն ներկայացուցիչները երկրին կացութեան մասին խորհրդակցելու և որոշումներ տալու համար, եւ իբր թէ Յարը այդ նպատակով հրովարտակ մը պիտի հանէ:

— Բեթերսպուրկի շրջանի գործաւորները, որոնք 400,000 հոգի են, իրենց գաղտնի ժողովներուն մէջ որոշած են պատգամաւորութիւն մը զրկել Յարին:

— Մաքսիմ Կորքիին ազատ արձակման լուրը ճիշդ չէ: Իր կիներ որ նիմի նօվկոյսօս կապրի եկած է Բեթերսպուրկ և տեսակցութիւն ունեցեր է ամուսնոյն հետ: Կորքի իր կնոջ յայտնած է որ բանտին մէջ իրեն հետ ազէկ կը վարուին:

— Վարչապէսն կը հեազրեն ամսոյ 24ին որ Սասնովեցայի բոլոր գործաւորները գործադուրած են: խոզութիւնները Վարչապայի մէջ կը շարունակուին: գործադուր ընողներուն թիւը 30 նաչարի կը հասնի: Պատերազմ վիճակի մէջ գրուած են Վարչապաւ Լօազ և Պօքօլի նահանգները:

— Լօնտօն կը հեազրեն որ Բեթերսպուրկի մէջ 6000 պահեստի զինապատմբած են, որոնք ամենքն ալ ձերբակալուելով բանտարկուած են զօրանոցներուն մէջ:

— Թիբիլիզէն յունիստ 24ին կը հեազրեն որ Բաթումի գործադուր ընողներէն 300 հոգի յարձակեր են երկաթուղիի կայարանին վրայ և ստիպեր են քանի մը շտեմարաններ գոցել:

— Լուր կը պատի որ տէրտէր կարօնի Չուիցերիա փխսած է:

ՌՈՒՍ — ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐ Ա Ձ Մ

«Իթի Ժուրնալ» Բեթերսպուրկէն կիմանայ թէ Գուրօրաթքիի վերադարձը հիւանդութեան պատճառով, սկզբունքով ընդունուած է: Կըսուի թէ Գուրօրաթքիին ուղեղային անէմի ունի:

Փէնէրալ կրինպէրկ կը պահանջէ մասնաւոր արագ թոկն մը կազմակերպել շուտով Բեթերսպուրկ վերադառնալու համար, որովհետեւ ցարին հազորգելիք շատ կարելոր տեղեկութիւններ ունի աւելիք:

— Եւրոպական թերթերը կը հազորգեն որ ճարնացիք Գուրօրաթքիին բանակը ձեղքելով Խունիստ գետին միւս կողմը անցած են:

ՕՏՈՎՈՐՈՒՆԻԿՆ Մուրադ-Երանօսյան՝

Սեպտեմբր 24, 1905 Վարնա